
**ԽՈՆԱՐՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՎԱՅԵՍ
ԿԱՂԱՆԿԱՏՎԱՅՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿՈՒՄ**

ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

«Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատությունը¹ միջնադարի նշանավոր պատմագիտական երկերից է, որի մեծ մասը ստեղծվել է VII դարում, և հեղինակն է Մովսես Կաղանկատվացին: Երկը, սակայն, խմբագրվել և իր վերջնական տեսքն է ստացել X դարում Մովսես Դասխուրանցու կողմից:

Որևէ հեղինակի լեզուն ուսումնասիրելու հարցում կարևոր է խոնարհման առանձնահատկություններին անդրադառնալը: «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ կան խոնարհման ինչպես դասական հայերենին բնորոշ ձևեր, այնպես էլ առանձնահատկություններ, որոնք հատուկ են Կաղանկատվացուն և Դասխուրանցուն: Սույն հոդվածում քննության են առնվում բայի և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերը, ինչպես նաև խոնարհման շեղումները:

Բայի անդեմ ձևերից երկուսն ամենից շատ հանդիպում է անցյալ դերբայը, այնուհետև անորոշը, իսկ ավելի քիչ՝ ենթակայականը և ապառնին (վերջինս՝ հիմնականում բաղադրյալ ժամանակների կազմում):

Երկուսն առկա են դասական գրաբարի բոլոր լծորդություններով բայեր, որոնցից մեծ թիվ են կազմում **ե** խոնարհման բայերը: Ինչպես գիտենք, հին հայերենի դասական շրջանում **ե** և **ի** խոնարհման բայերը անորոշ դերբայի կազմության ժամանակ ստանում են նույն վերջավորությունը՝ **ել**: «Աղուանից պատմութեան» մեջ, սակայն, գտնում ենք **իլ** վերջավորությամբ անորոշի ութ կիրառություն՝ խնամաւորիլ նախարարացն Աղուանից ազգաշաղախս և անիծանիլ - «Աղվանքի նախարարների ազգապիղծ խնամիանալը և անիծվելը» (էջ 212), Գիւտ եպիսկոպոս ի տէր քերկրիլ (էջ 27), խնամաւորիլ Միհրական տոհմին (էջ 338), սատակիլ նմա (էջ 330), ընդդեմ նորա ցտանիլ (էջ 214), թափիլ գոլ (էջ 223), մի՛ դասիլ (էջ 277):

Ծիշտ է, դասական շրջանի գործերում ևս երբեմն հանդիպում է **-իլ** մասնիկը, սակայն մասնիկի գործածությունը սովորական է դառնում հետդասական շրջանում: Մովսես Խորենացուց սկսած (խոնարհիլ, կատարիլ, հարցանիլ, սրբիլ) հաճախ է հանդիպում անորոշի գործածության այդ ձևը: Բազմաթիվ օրինակներ ենք գտնում Հովհաննես Դրասխանակերտցու գործում: Անդրադառնալով «Աղուանից պատմութիւնից» բերված օրինակներ

¹ Տե՛ս **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը Վ. Առաքելյանի, Եր., 1983:

րին՝ նկատում ենք, որ դրանց մի մասը նույնիսկ **ի** խոնարհման չի պատկանում. *անիծանիլ, թափիլ* բայերը **ե** խոնարհման են, իսկ *խնամաւորիլ* բայ ՆՅԲ-ն չի տալիս: Նկատում ենք նաև, որ դրանց մի մասը կրավորականի իմաստ է արտահայտում («անիծվել», «դասվել»): Սա մեզ հուշում է, որ կրավորականի արտահայտման այս ձևը առկա է նաև «Աղուանից պատմութեան» մեջ: Ըստ Ա. Աբրահամյանի՝ երբ գրաբարը դադարեց խոսակցական լեզու լինելուց, մատենագիրները սկսեցին գործածել **-իլ** մասնիկը՝ առաջին հերթին **ե** խոնարհման կրավորական սեռը և ապա՝ **ի** խոնարհման բայերը տարբերելու համար²:

«Աղուանից պատմութեան» հեղինակը հաճախ է դիմել անորոշ դերբայի գործածությանը դիմավոր բայի արժեքով՝ *Ամենայն ազատակոյտ նախարարացն և ռամկացն Յոնաստանեայց գալ յերկրպագութիւն պաշտաման* - «հոգների ամբողջ նախարարների ազատանին ու ռամիկները հավաքվում են պաշտամունքի արարողության» (էջ 242): «Ոչ պատուհասի, այլ մեծի ողորմութեան է նշանակ, որպէս խրատել զսիրելի որդի և անտես առնել զօտարացեալ խորթն» (էջ 33): «Բայց դա ոչ թե պատուհասի, այլ մեծ ողորմության նշան էր, ինչպես որ խրատում են սիրասուն որդուն և անտեսում օտարացած խորթին»: Այսպիսի օրինակները շատ են:

Երկում անորոշ դերբայը **մի** մասնիկի հետ արգելական հրամայական է կազմել. օրինակ՝ *Վասն որոյ ասեմք քեզ, մի՛ կրկնել առ իս վասն դորին ունայն խնդրոյ. ապա եթէ ոչ, եղիցին կամք քո* (էջ 134): «Դրա համար քեզ ասում են, մի՛ շարունակիր իմ նկատմամբ դրա դատարկ պահանջով, ապա եթե ոչ, թող քո կամքը լինի»: *Զիմ տեսիլդ մի՛ ումեք յայտնել*: «Իմ երազը ոչ որի մի՛ պատմիր» (էջ 73): Այսպիսի գործածություն գտնում ենք նաև V դարի գործերում («Աստվածաշունչ», Բուզանդ):

Ա. Աբրահամյանը գտնում է, որ հենց սա է արգելականի սկզբնական ձևը³: Ճիշտ է, հրամայականի ժխտականը կազմվել է հիմնականում **մի** մասնիկով, սակայն գտնում ենք նաև **ոչ** մասնիկով ժխտականի ձևեր՝ Ջայնպիսին ի սահմանաց ձերոց հալածեսցիք և զմահաբեր վարդապետութիւն նորա ամենևին *ոչ լսել* (էջ 125):

Երկում առկա են փոխանցումներ խոնարհումների մեջ՝ *փախչել/փախնուլ, յաւելուլ/յաւելել (յաւելիմ), զերծուլ/զերծնուլ/զերծանել*: Մատենագրության մեջ հայտնի են *զերծուլ/զերծանել/զերծել* զուգահեռ ձևերը, սակայն Կաղանկատվացին ունի նաև *զերծնուլ* բայը:

ե, ի խոնարհումների պարզ բայերի ենթակայական դերբայը Կաղանկատվացին կազմել է ներկայի հիմքից, սակայն երկում հանդիպում են բայեր, որոնց ենթակայական դերբայները անցյալ կատարյալի հիմքից են կազմվել. ինչպես՝ *այրեցող* (էջ 22), *խորհեցող* (էջ 125), *իշխեցող* (էջ 337): Ածանցավոր բայերը գործածվում են և՛ ներկայի, և՛ անցյալ կատարյալի

² Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 58:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 285:

հիմքից կազմված ձևերով. օր.՝ *խածանող* (էջ 101, 223), *բեկանող* (էջ 156), *կսկծանող* (էջ 324) – ներկայի հիմք, *գտող* (էջ 83), *ելող* (էջ 123), *տեսող* (էջ 110, 208, 210), *սպանող* (էջ 223, 327) - անցյալ կատարյալի հիմք: Պատճառական ածանց ունեցող *հիացուցանող* բայի ենթակայական դերբայը կազմվել է ներկայի հիմքից (էջ 83, 186, 333):

Պատմիչն ունի *մրմռող* (էջ 101) դերբայը: Առաջին հայացքից թվում է, որ սա շեղում է, քանզի հայտնի է որպես **ա** խոնարհման բայ, իսկ **ա** խոնարհման բայերը ենթակայական դերբայը կազմում են անցյալ կատարյալի հիմքից, սակայն երկուսն գտնում ենք *մրմռել* (էջ 21) բայը, որի ենթակայականը, բնականաբար, պետք է լինի *մրմռող*, նշենք նաև, որ ՆՅԲ-ն *մրմռամ* բայից բացի, տալիս է *մրմռեն*-ը և հղում է անում Կաղանկատվացուն՝ *Բարկութեամբ լցեալ մրմռէր թագաւորն*: Փաստորեն, բառը ոչ թե շեղում է, այլ **ե** խոնարհման բայ:

Երկուսն «ոչնչացնող» իմաստով գտնում ենք հետևյալ զուգահեռ ձևերը՝ *ծախող* (էջ 164) // *ծախիչ* (էջ 193):

«Աղուանից պատմութեան» մեջ անցյալ դերբայը գործածվել է դիմավոր բայի արժեքով: Երկուսն բազմաթիվ են այդպիսի օրինակները՝ *Ապա սիւն առ ծովակին կանգնեալ և առիւծ ի վերայ մատակ ընդ ոտիւքն ունելով նշան իմն կոչել առիւծ գՊարսս և մատակ գՂռովմայեցւոց տէրութիւնն* (էջ 30-31): Ամբողջ նախադասության մեջ որևէ դիմավոր բայ չկա: Կամ՝ *Եղեալ զերկոսեան շիշսն ընդ ամենասուրբ նշխարսն մանկանն Գրիգորիսի* (էջ 39):

«Աղուանից պատմութիւն» գրքում գտնում ենք բայեր, որոնք շեղվել են խոնարհման ընդունված կանոններից: **Ընկլուզանեն** բառը՝ որպես **ե** խոնարհման ածանցավոր բայ, անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում պետք է հանդես գա արմատական հիմքով, սակայն երկուսն երկրորդ ապառնին կազմվել է ցոյական հիմքով՝ ընկլուզեսցին: «Ձանգիւտ կորստեան փորեցին խորխորատ, զի զհովիւն բարի ընկլուզեսցին ի նա» (էջ 226): (= Անդառնալի կորստյան անդունդ փորեցին, որպեսզի բարի հովվին խորասուզեն նրա մեջ):

Վ. Առաքելյանի կազմած քննական բնագրում կա **յուլին** բառը, սակայն, ըստ այլ ձեռագրերի և արտահայտած իմաստի՝ ուղղում ենք՝ **յուզին** (էջ 169): *Յուլանալ* նշանակում է «ծուլանալ, թուլանալ, դանդաղել», իսկ **յուզեն** նշանակում է «փնտրել, որոնել», որն էլ ավելի նպատակահարմար է տեքստում, սակայն *յուզեն*-ը **ե** խոնարհման բայ է, իսկ պատմիչն օգտագործել է **յուզին** (=որոնում են) ձևով: «Եւ յուզին միտք իմ բազում ճառօք ածել օրինակս»:

Յաւելուլ բայը՝ որպես **ու** խոնարհման պարզ բայ, անցյալ կատարյալում ունենում է ներգործածն խոնարհում, սակայն երկուսն գտնում ենք *յաւելաւ* ձևով (էջ 171, 149): «Որ յերկիւղէ քումնէ յաւելաւ ի թշնամիս քո և յարուցանէ ի վերայ քո խռովութիւնն» (էջ 171): (= Որ քո երկյուղից միացավ թշնամիներիդ և խռովություն է գրգռում քո դեմ): Հետաքրքիր է, որ

ապառնի ժամանակով գործածվելիս ներգործածն է խոնարհվել՝ յաւել-
ցես (էջ 144): «Ձի եթէ ոչ փութանակի յաւելցես ինձ զօր ի թիկունս իմ...»:
(= Եթէ շտապ կարգով ինձ օգնական զորք չավելացնես...): Այս բայը Կա-
ղանկատվացին անկատար անցյալ ժամանակածնում խոնարհել է յաւե-
լուր ձևով (էջ 187): «Գնա՛, մուտ ընդ դուռն Չորայ, և մի՛ ևս յաւելուր զալ
այսր»: Սա վկայում է այն մասին, որ, հիրավի, ոչ երկբարբառը ժամանա-
կի ընթացքում վերածվել է ու-ի: Ա. Աբրահամյանը նշում է. «Այդ օրենքը
որպես հնչյունափոխական երևույթ հաստատուն է հայոց լեզվի համար.
հմնտ. մարդոյ > մարդու, գնալոյ > գնալու»⁴:

Ե խոնարհման **ճախրեն** և **պարզեն** բայերը խոնարհված են **ի** խո-
նարհիչով՝ «Եւ թռչունք երկնից ճախրեսցին ի վերայ նորա» (էջ 228): «Ձի
ի մեծ վայելչութենէ փառացո պարզեսցի և պսակաբաղձիկ խոնարհու-
թեանս մերում աստուածաշնորհ բարերարութիւն» (էջ 181):

Եթէ հիշյալ օրինակներում շեղումը անցյալ կատարյալի հիմքից
կազմվող ձևերում է, ապա Ե խոնարհման **հաստատեն** բայը հոգնակի
հաստատենք ձևի փոխարեն գտնում ենք **հաստատիմք** ձևով (էջ 252):
«Յաւատամք ի ձեզ և հաստատիմք անդրէն շինել և պաշտել զմե-
հեանս...»: (=Ձեզ կհավատանք, կորոշենք նորից շինել ու պաշտել մեհ-
յանները):

Կաղանկատվացին գործածել է *եղերուք կատարեալք* բայը (էջ 258),
որտեղ լերուք բայի փոխարեն դրված է եղերուք:

Հայկազեան բառարանում **հեղգամ** (=ծուլանամ) բայը տրված է նաև
հեղգեն զուգահեռով, սակայն երկուսն առկա է մի՛ հեղգասցիս (էջ 306)
բառը՝ ի խոնարհիչով: «ժրացիր և քաջ լեր և մի՛ հեղգասցիս»:

Ունիմ բայի երկրորդ ապառնին լինում է կալցին, սակայն Կաղան-
կատվացին խոնարհել է կալցեն (էջ 310): «Ձիրաւունս եկեղեցւոյ Աստու-
ծոյ քահանայք կալցեն ճշմարիտք և ուղղափառք»:

Լնուլ բայը խոնարհված է լցաւ ձևով (էջ 128): «Իբրև լցաւ ժամանակ
գերութեանն Երուսաղեմի...»: «Գրաբարի ձեռնարկ»-ում կարդում ենք.
«Ու լծորդության ածանցավոր բայերը խոնարհվում են կրավորածն: Բա-
ցառություն են կազմում առնուլ, ընկենուլ, լնուլ, խնուլ բայերը, որոնք
խոնարհվում են ներգործածն, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև կրավո-
րածն»⁵:

Փախչել բայը հանդես է գալիս նաև փախնուլ զուգահեռ ձևով, ո-
րոնք երկուսն էլ ավանդված են դեռևս V դարից: Երկուսն բայի անորոշ
դերբայը հանդիպում է միայն փախչել ձևով (էջ 18, 137), սակայն խո-
նարհված ձևով կա փախնուցու բայը (փախնուլ (էջ 156)): Սրանցից տա-
րածված են ի խոնարհիչով ձևերը:

⁴ Ա. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քա-
նի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, Հաս. գի-
տութ. 1957, № 4, էջ 27:

Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 138:

Պաշտեցիք (էջ 251) և **հասիք** (էջ 299) բայերը դրված են անցյալ կատարյալի հոգնակի երկրորդ դեմքով, իսկ այդ դեմքի վերջավորությունները երկուսն են՝ *-եք* կամ *-իք* (ավելի հաճախ գործածվում է *-եք* վերջավորությունը): Հր. Աճառյանն իր «Լիակատար քերականություն» գրքում նշում է, որ *-իք*-ը ծագել է *-էք* վերջավորությունից: Անցյալ կատարյալի հոգնակի երկրորդ դեմքը նույնանուն է հրամայականի հետ, ինչպես՝ սիրեցէք, հատէք, որոնք և՛ կատարյալի, և՛ հրամայականի ձևեր են: Այս նույնաձևությունից խուսափելու համար ավելի ուշ անցյալ կատարյալի վերջավորությունը դարձել է *-իք*⁶:

Զնոռանանք նաև, որ հենց հին հայերենում անկանոն խոնարհում ունեցող բայերի մեջ կային այնպիսիները, որոնք անցյալ կատարյալի հոգնակի երկրորդ դեմքի համար ունեին *-իք* վերջավորությունը (դնել - եղիք, գալ-եկիք):

Ուտել բայի անցյալ կատարյալն ունի կերա//եկեր ձևերը, սակայն Կաղանկատվացին գործածել է *եկեր* (էջ 164, 331):

Երկուսն առկա են անկատար անցյալի *-իւր* վերջավորությամբ ձևեր: Պատմիչը 23 անգամ գործածել է *-իւր* վերջավորությունը՝ անկատար անցյալի եզակի երրորդ դեմքի կրավորական իմաստն արտահայտելու համար (ոչ միշտ): ինչպես՝ *կոչիւր* (էջ 145, 238), *վերերևիւր* (էջ 84), *դատապարտիւր* (էջ 110), *եղանիւր* (էջ 112), *շաղախիւր* (էջ 174), *յուղարկիւր* (էջ 195), *մմանիւր* (էջ 206), *գտանիւր* (էջ 249, 297), *սատակիւր* (էջ 330), *հանդիպիւր* (էջ 336), *գեղապարիւր* (էջ 287), *կատարիւր* (էջ 288), *փոխադրիւր* (էջ 293), *առասպելաբանիւր* (էջ 312), *ճանաչիւր* (էջ 327): Ոչ բոլոր բառերն են *ե* խոնարհման (*վերերևիւր*-ը ի խոնարհման է), և ոչ բոլորի մեջ է հստակ կրավորականի իմաստը: «Հայոց լեզվի պատմական քերականություն» աշխատության մեջ այդ մասին գրված է. «Ե խոնարհման բայերի հետևողականությամբ *ի* խոնարհում ունեցող բայերի անկատարը ևս *իւր* վերջավորություն ունի (սկսանիւր), իսկ այդ նշանակում է, որ լոկ կրավորաձևության մեջ արտահայտվող կրավորական սեռի իմաստն արդեն թուլացել է: Սկսելով *ե* խոնարհումից՝ երևույթն այնուհետև տարածվեց նաև մյուս խոնարհումների վրա»⁷:

Անկատար անցյալի այսպիսի բազում օրինակներ ունի X դարի պատմիչ Հ. Դրասխանակերտցին: Ի տարբերություն դասական գրաբարի, որի դեպքում *իւր*-ով անկատար անցյալի ձևերը հազվադեպ են, X դարում դրանք արդեն բազմաթիվ են: Նշենք նաև, որ այս բոլոր 23 օրինակներից հինգն է Կաղանկատվացունը, մնացած բոլորը գործածել է X դարի հեղինակ Դասխուրանցին:

«Աղուանից պատմութեան» մեջ երկրորդ ապառնին անհամեմատ գործածական է, քան առաջին ապառնին: Դեռևս 5-րդ դարի երկերում, բա-

⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, գիրք Ա, Եր., 1959, էջ 307:

⁷ Ս. Անթոսյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Եր., 1975, էջ 370:

ցի եզնիկ Կողբացուց, մնացած բոլոր հեղինակները նախապատվությունը տվել են երկրորդ ապառնուն: Այդպես է նաև Կաղանկատվացու երկուն: Այդ ամենով հանդերձ, գտնում ենք առաջին ապառնու գործածության 43 դեպք (այստեղ չենք հաշվել Կաղանկատվացու՝ Աստվածաշնչից նույնությամբ մեջբերած հատվածները): Նշված 43 դեպքից 30-ը գործածված է բուն ապառնու նշանակությամբ:

Կաղանկատվացու երկուն առաջին ապառնին ավելի հաճախ տեսնում ենք գործածված բարդ ստորադասական նախադասության մեջ՝ երկրորդական նախադասության կազմում: Ընդհանրապես, գրաբարում առաջին ապառնին հանդես է գալիս երկրորդական նախադասության մեջ, թեև երկրորդական նախադասության մեջ հանդիպում ենք նաև երկրորդ ապառնու⁸: Քննելով առաջին ապառնի ունեցող նախադասությունները՝ տեսնում ենք, որ նրանց մեծ մասը հանդես է եկել պայմանի պարագա երկրորդական նախադասության կազմում (7 անգամ). օրինակ՝ «Եթե աշխարհական ոք ի վերայ երիցու բամբասանս դնիցէ, եպիսկոպոսն դնիցէ ի վերայ նոցա կարգ և յանապատի ապաշխարեսցեն» (էջ 92), «Եւ եթէ ոչ զգուշացուցանիցէք զարիւն նոցա ի ձեռաց ձերոց խնդրեցից» (էջ 306):

Առաջին ապառնի ենք գտնում նաև նպատակի պարագա երկրորդական նախադասության մեջ. օրինակ՝ *Պարտ և արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պտուղ բարի և քաղցր ի հաճոյս նորա..., զի յերևել Փրկչին մերոյ Աստուծոյ՝ ընդունիցիմք զանթառամ փառաց պսակն* (էջ 307): «Պետք է ու արժան է պտղաբերել Աստծու համար բարի և քաղցր պտուղ, որպեսզի մեր Փրկիչ Աստծուն ներկայանալիս ընդունենք փառքի պսակ»: Երկուն առկա են որոշիչ երկրորդական նախադասության կազմում գործածված առաջին ապառնիներ ևս. օրինակ՝ *Եւ անձն, որ հեթանոսաբար շրջիցի յաշխարհիս իմում, կամ գաղտ կռոց զոհեսցէ, սատկեցից սրով* (էջ 260): «Այն անձը, որ իբրև հեթանոս կշրջի մեր երկրում, կամ գաղտնի կուռքերին զոհ կմատուցի, սրով կսպանեն»: Առաջին ապառնի է հանդիպում նաև ուղիղ խնդիր երկրորդական նախադասության մեջ. ինչպես՝ *Առաքէ զնա բազում խոստմամբք անթիւ և անհամար զանձուց, թէ միայն ձեռնտու լինիցին ինձ ի մեծ նախանձուէս* (էջ 141): «Ուղարկում է նրան բազմաթիվ զանձերի խոստումներով՝ հանձնարարելով ասել, որ իրեն օգնեն վրեժխնդրության մեջ»:

Կաղանկատվացին առաջին ապառնի ավելի քիչ գործածել է չափի և ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների մեջ. օրինակ՝ *Եւ յետ այնր որչափ տուգանս տայցէ մարդն, որ ի կանոնսն գրեալն է, ընդ օրհնութեամբ արասցեն* (էջ 94): *Ո՞չ ապաքէն յորժամ կապիցենք զհզորն, զտուն նորա, որպէս և կամիցիմք, աւար հարկանիցենք* (էջ 139):

⁸ Տե՛ս Լ. Գովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցեր», Եր., 1975, էջ 303:

Եթե խմբավորելու լինենք վերոհիշյալ օրինակները, կտեսնենք, որ բոլոր դեպքերում առաջին ապառնի ժամանակը հանդես է եկել *եթէ, թէ, որ, զի*, նաև՝ *յորժամ* բառերից հետո:

Երբեմն առաջին ապառնիով բայը դրվում է ոչ թե երկրորդական, այլ գլխավոր նախադասության մեջ. օրինակ՝ *Մեռեալ մարդոյն եթէ ձի է՝ մի ձի, զոր և կամի, և եթէ արջառ է՝ մի արջառ, զոր և կամի, յեկեղեցին տայցէ (էջ 91):* «Եթե ձի ունի կամ արջառ, մեռելի տերը եկեղեցուն պետք է տա, դրանցից որ մեկը կամենա»:

Առաջին ապառնու հաջորդ կիրառությունը գտնում ենք հարցական նախադասություններում. օրինակ՝ *Եւ կամ համարձակիցի՞ որ առաջի քո բանալ գրերան իւր և խօսել գրանս հանճարոյ* (էջ 158):

«Աղուանից պատմութեան» մեջ շատ են բաղադրյալ ժամանակով բայերը:

Երկուսն ամենաշատը գործածված է անցյալ դերբայ+օժանդակ բայի անցյալ (էի) կաղապարով բաղադրյալ ժամանակը, այսինքն՝ վաղակատար – հարակատար անցյալը:

Անցյալ դերբայը դիմավոր ձև է կազմում նաև լինել բայի հետ:

«Աղուանից պատմութեան» մեջ կա 43 դեպք: Ինչպես հայտնի է, այս դեպքում խոնարհվում է լինել բայը:

Լինել բայի ներկայով ձևը հազվադեպ է երկուսն. եկեալ լինի (էջ 54), լինի ձեռնադրեալ (էջ 321), սպանեալ լինի (էջ 321):

Ի տարբերություն ներկայի՝ շատ ավելին են անկատար անցյալով ձևերը (15 օրինակ): Պատճառը թերևս այն է, որ անկատար անցյալը ներգործական և կրավորական սեռերի համար չունի տարբերակիչ վերջավորություններ, ուստի անցյալ դերբայ+լինել բայի անկատար անցյալ կաղապարով արտահայտված է գերազանցապես կրավորական իմաստ. օրինակ՝ *խողխողեալ լինէին* = *խողխողվում էին* (էջ 42), *լինէին շնորհեալ* = *շնորհվում էին* (էջ 183): Չենք կարող փաստել, սակայն, որ լինել-ը միայն կրավորական իմաստի դեպքում է ի հայտ գալիս: Հազվադեպ պատահում են օրինակներ, երբ լինել բայի անկատարով ձևը կրավորական իմաստ չի արտահայտում. օրինակ՝ *ընթերցեալ լինէին* = *կարդում էին* (էջ 64), *զարմացեալ լինէր* = *զարմանում էր* (էջ 197):

Այսպիսով, «Աղուանից պատմութեան» մեջ առկա են որոշակի առանձնահատկություններ, խոնարհման շեղումներ, սակայն դրանք շատ չեն, քանի որ X դարում խմբագրված երկի մեծ մասը գրվել է VII դարում և բնականաբար դասական հայերենից զգալիորեն չի տարբերվում:

МАРИАМ МКРТЧЯН – Особенности спряжения в “Истории Алуанка” Мовсеса Каланкатуаци. – В “Истории Алуанка” имеются глаголы, спряжение которых отклоняется от форм, принятых в классическом грабаре до 460 г. В их числе *yavelum* ‘добавлять’, *čaxrem* ‘парить’, *hastatem* ‘утверждать’, *pargewem* ‘наградать’, *helgam* ‘лениться’ и др. Как известно, в классическом армянском ин-

финитив не имеет окончания *-il*, однако в названном сочинении встречаются восемь инфинитивов с этим окончанием. В “Истории Алуанка” используются как инфинитивы, так и причастия прошедшего времени в качестве личного глагола.

Известно, что в классическом грабаре не имелось особых окончаний для страдательного залога. Однако окончание *iwr* использовано 23 раза и является показателем страдательного залога для III лица единственного числа в несовершенном виде прошедшего времени. В отличие от второго будущего времени, первое будущее время употребляется крайне редко. В указанном сочинении присутствуют также параллельные формы спряжения.

MARIAM MKRTCHYAN – *The Peculiarities of Conjugation in the Work of "The History of Albania" by Movses Kaghankatvatsi.* – In the work "The History of Albania" some verbs have forms deviated from the classical Armenian conjugation patterns. These verbs are: *yawelum* ‘increase’, *čaxrem* ‘flit, soar’, *hastatem* ‘confirm’, *pargewem* ‘award’, *helgam* ‘be lazy’ etc.

The infinitive in classical Armenian didn't have the ending *-il*, but there are 8 cases with the ending *-il* in this work.

The use of the infinitive and the past participle in the function of finite verbs is characteristic for this work.

It is a well-known fact that there were no special endings for the passive voice in the classical Armenian but the ending *-iwr* of the third person singular for the past indefinite in the passive voice, is used 23 times in this work.

Unlike the second future, the first future is rarely used in this work.

Parallel forms of conjugation are used as well.